**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"24" հունիսի 2025թ. N 1367-Ա

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի № 826-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի № 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համակարգին օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից տրամադրված վարկային ու դրամաշնորհային միջոցների հաշվին նախապատրաստվող և իրականացվող ծրագրերի կառավարման խորհրդի 2025 թվականի հունիսի 19-ի № 4-01-02/25 որոշումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի մայիսի 10-ի «Օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի

Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համակարգին տրամադրվող վարկային և դրամաշնորհային միջոցների հաշվին նախապատրաստվող ու իրականացվող ծրագրերի կառավարման խորհրդի աշխատակարգը և անհատական կազմը հաստատելու մասին» № 826-Ա հրամանի 1-ին կետով հաստատված՝ օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ծրագրերի կառավարման խորհրդի աշխատակարգում (այսուհետ՝ աշխատակարգ) կատարել հետևյալ լրացումները.

1) աշխատակարգի 7-րդ կետի գ) ենթակետը «մրցույթների» բառից հետո լրացնել «, ինչպես նաև 8.1 կետի.» բառերով.

2) 8-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին կետով՝

«8.1. Ծրագրի առանձնահատկություններից ելնելով՝ ծրագիրը գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնելու դեպքում, ընկերության ղեկավարը, առաջնորդվելով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, մրցութային գործընթացի ավարտից հետո մրցույթի արդյունքները համապատասխան փաստաթղթերով ներկայացնում է խորհրդի քննարկմանը:»:

6/24/2025

X

ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

**ՆԱԽԱՐԱՐ՝** Signed by: KHUDATYAN DAVIT 1308910274 **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

**ք. Երևան**